

ՀՈԼՈՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀՈԼՈՎԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Ի տարբերություն խոսքի մասերի ներսում առկա իմաստային դասերի, քերականական կարգերում ամրագրված են միայն այն քերականական իմաստները, որոնք ստանում են ձևաբանական դրսևորում: Այլ կերպ ասած՝ քերականական կարգերի ներսում պարտադիր է բովանդակության և ձևի համատեղում: Սակայն միշտ չէ, որ հաջողվում է առաջնորդվել նման սկզբունքով և խուսափել հակասություններից:

Ինչպես վկայում է լեզվաբանության պատմությունը, թերևս ոչ մի քերականական հարցի շուրջ այնքան աղմուկ չի բարձրացել, որքան հոլովի քերականական կարգի շուրջն է: Դեռևս չկա հոլովի սպառիչ և հակասություններից զերծ մի սահմանում: Պատճառները տարբեր են, որոնցից մեկն է՝

- «Ի՞նչ է հոլովը» հարցին տրված պատասխանների բազմազանությունը
- «հոլով»-ը լեզվական տարբեր մակարդակներում ուսումնասիրելը
- ամանդական պատկերացումներից կառչելը
- այլ լեզուների նյութի վրա կառուցված քերականական տեսությունների ոչ տեղին օգտագործելը
- որոշ լեզվաբանական հասկացությունների շփոթելը
- որդեգրած սկզբունքների անհետևողական կիրառելը:

Նշված պատճառների հանգամանալից շարադրումն այստեղ մեզ համար նպատակային չէ. դրանց մասին կխոսենք այնքանով, որքանով դա առնչվում է հոլովական իմաստների խնդրին:

Հոլովի քերականական կարգը լեզվաբանական գրականության մեջ ստացել է ամենատարբեր մեկնաբանություններ: Ամենատարածվածն այն է, համաձայն որի՝ հոլովը համարվում է անվան ձևաբանական փոփոխությունների հարացույց, փոփոխություններ, որ հետևանք են անվան առկայացման գործընթացի: Մինչդեռ հայտնի է, որ այդ գործընթացը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ հարացույցային հարաբերություններից անցում շարակարգային:

Ուրեմն, ինչպե՞ս բնութագրենք հոլովը՝ զուտ հարացույցային, թե՞ նաև շարակարգային հարաբերություններով: Հենց այստեղ է, որ ծագում են տարբեր տեսական դրույթներ: Միայն ձևով առաջնորդվողներին մեղադրում են ձևապաշտության մեջ, իսկ իմաստով առաջնորդվողների ուսումնասիրու-

թյուններն էլ համարում ոչ-լեզվաբանական, այլ՝ փիլիսոփայական, հոգեբանական...

Հայտնի է, որ հնդեվրոպական նախալեզուն ունեցել է ավելի շատ հոլովներ, քան այսօր ունեն այդ լեզվաընտանիքի լեզուներն՝ առանձին-առանձին: Որոշ գիտնականներ (Ա.Մեյե, Յ.Աճառյան...) լեզվական հարստություն են համարում դրանց մաքսիմալ պահպանումը:

«Հայերենի հոլովները մինչեւ օրս առանց եական փոփոխության պահպանել են իրենց հնդեվրոպական գլխաւոր իմաստը, եւ այս պահպանումը առաւել եւս ուշագրաւ է նրանով, որ սլաւոնականից եւ բալթիականից դուրս այն ոչ մի լեզուում չի հանդիպում»¹:

Ահա նման ավանդական մոտեցումն է պատճառը, որ այսօր հայագիտության ասպարեզում չեն լուծւմ բանավեճերը՝ կապված հոլովների դասակարգման հետ:

Ընդունելով հինգ հոլով՝ մենք հոլովը ձևերի հարացույց ենք համարում, ընդունելով յոթը՝ տեղափոխվում շարակարգ և առանձնահատուկ ընդգծում այս կամ այն շարահյուսական ֆունկցիան: Վերջին դեպքում էլ միմյանց են խառնվում երկու տարբեր հասկացություններ՝ «հոլովական իմաստը» և «շարահյուսական ֆունկցիան»: Դժվար չէ նկատել, որ հինգ հոլովի տեսության հետևորդներին մեղադրելով ձևապաշտության մեջ՝ յոթ հոլովի տեսության հետևորդներն էլ «իմաստ» ասելով հասկանում են ոչ այլ ինչ, եթե ոչ՝ շարահյուսական ֆունկցիաներ:

Ցանկացած քերականական կարգ, ինչպես և վերը նշեցինք, ձևաիմաստային միասնություն է, որը չի հերքվում նաև հինգ հոլովի սահմաններում: Ուրեմն, ճիշտ է Դ. Բարսեղյանը, երբ ասում է.

«Հոլովները զանազանելու այսպես կոչված ձևա-իմաստային սկզբունքը լեզվաբանական միասնական սկզբունք չէ: Այն լեզվի ձևի և բովանդակության (իմաստի) անբաժանելիության ընդհանուր դրույթի անհաջող կիրառումն է, հայերենի յոթ հոլովի ավանդական սխեմայի գոյության հիմնավորմանը հարմարեցված դատողություն: Նա ոչ թե հայերենի հոլովները որոշելու սկզբունք է, այլ նախապես ընդունված յոթ հոլովների տեսական «արդարացումը» »²:

¹ Ա.Մեյե, «Դասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծ», թարգմ. Մարտիրոս Մինասյանի, Ժնև, 1988, էջ 63

² Դ.Բարսեղյան, Ա.Սեփյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները, Ե. 1967, էջ 75

Մեր ուսումնասիրության նպատակը չհամարելով հայերենի հոլովների շուրջ ծավալված բանավեճերի քննությունը և ակնարկելով հիմնական մոտեցումների մասին միայն՝ հակիրճ անդրադառնալով նաև Է.Աղայանի առաջարկած «վեց հոլովի տեսությամբ»։ Սահմանափակ թվով (8) դերանունների հարցում չկարողանալով տեղավորվել հինգ հոլովի շրջանակներում՝ Աղայանը դիմում է փոխակերպական մեթոդին և փորձում վեցերորդ հոլովը տարածել նաև գոյականների վրա։ Սակայն պետք է նկատել, որ ժամանակակից հայերենում գոյականների սեռական հոլովը պատմականորեն նույն կարգավիճակն ունի, ինչ հայցական հոլովը. այս երկուսի իմաստներն էլ, չունենալով առանձնահատուկ ձև, դարձել են այլ հոլովների ենթմասսներ։

Մենք էլ հայերենում ընդունում ենք հինգ հոլովի ամկայություն, քանի որ հոլով ենք համարում *հոլովական վերացական իմաստը, որ ստանում է ձևաբանական ինքնուրույն արտահայտություն*։ Ունենք հինգ ձև, հինգ հոլովական վերացական իմաստ (դրա մասին կխոսվի ստորև), հետևաբար ունենք նաև հինգ հոլով։ Իսկ դառնալով դերանունների հիշյալ խմբին՝ ունենք մի այսպիսի մոտեցում. դրանք կարելի է համարել միևնույն հոլովի երկու բացառիկ ենթաձև։ Դրանով, իհարկե, չենք առաջարկում նույն լեզվի սահմաններում տարբերակել անվանական հինգ և դերանվանական վեց հոլով. չէ՞ որ վերջնական պատասխան պիտի տրվի այն հարցին, թե քանի՞ հոլով ունի ժամանակակից հայերենը։ Ընդունելով նաև այն, որ դերանունները հոլովների հարցում շատ պահպանողական են (նույնիսկ վերլուծական լեզուների դերանուններում կան նման ձևական տարբերություններ)՝ այնուամենայնիվ, կարծում ենք՝ ճիշտ կլինի հայերենի համար ընդունել հինգ հոլով, վիճահարույց վեցերորդն էլ դիտել որպես *երկրորդ հոլովի ենթաձև*։

Դառնալով հոլովների իմաստային կողմին՝ պետք է նշենք, որ այստեղ էլ եղել են ծայրահեղ տեսություններ, որոնցում հոլովների իմաստային կողմի բացարձականացումը տարել է նրան, որ հոլով է փնտրվել նաև վերլուծական լեզուներում (Ս.Ե.Յախտով, Դե Բոեր...): Մոտեցումը կարելի է պաշտպանել, եթե ընդունենք, որ *հոլովը բառի փոփոխությունն է ոչ միայն բառի սահմաններում, այլև՝ նրանից դուրս*։

Իմաստի բացարձականացման մեկ այլ օրինակ է նաև Չ. Ֆիլմորի «Յոլովային քերականությունը», որ, 1960-ականներին ծագելով սերող քերականությունում, ամուսնեղը դասակարգում է՝ ըստ նախադասությունում նրանց կատարած դերի, դերեր, որ կառավարվում են գլխավոր բայի արժույթով։

Հոլովական իմաստների բացարձակացման դրսևորումներից է մակայն, որ որոշ քերականներ (հայ իրականության մեջ՝ Վ.Առաքելյանը) երբեմն մասնատում են հոլովի ընդհանուր իմաստը: Ճիշտ է, իմաստային խորքնությունը մեզ հնարավորություն է տալիս ճանաչել տվյալ հոլովն իր իմաստային բազմազանության մեջ, սակայն մյուս կողմից էլ՝ երկրորդ պլանում են մնում գլխավոր իմաստները:

Փորձելով վեր կանգնել այդ մասնավոր իմաստներից՝ որոշ լեզվաբաններ էլ (Լ.Ելմսլև, Յու.Կուրիլովիչ, Ռ.Յակոբսոն, Ա.դե Գրոտտ...) փնտրել են հոլովական ընդհանուր իմաստները, բերել հոլովների դասակարգման չափավոր իմաստաբանական չափանիշներ: Նրանց տեսություններում տիրապետող է այն դրույթը, թե հոլովական ընդհանուր իմաստներն անփոփոխականներ են, որոնք շարակարգում ստանում են մասնավոր՝ փոփոխակ, դրսևորումներ:

Լ.Ելմսլևն առանձնացնում է անփոփոխականների հետևյալ տեսակները՝

1. սուբյեկտ-օբյեկտայնություն
2. կոնտակտ
3. ուղղություն, որտեղ միախառնված են ձևաբանական և շարահյուսական չափանիշները:

Ռ.Յակոբսոնն էլ դիմում է հակադրության մեթոդին՝ հիմքում դնելով հետևյալ տարբերակիչ հատկանիշները՝

1. ուղղվածություն – ոչ ուղղվածություն
2. ծավալայնություն – ոչ ծավալայնություն
3. ժայրամասայնություն – ոչ ժայրամասայնություն³:

Հայ իրականության մեջ հոլովների ընդհանրական իմաստներով զբաղվել են հինգ հոլովի տեսության կողմնակից երկու խոշոր գիտնականներ՝ Գ.Բ.Ջահուկյանը և Է.Բ.Աղայանը: Հայերենի մյուսի վրա հենվելով (հիշենք, որ Յակոբսոնի տեսության հիմքում ռուսերենն է)՝ Գ.Ջահուկյանն առանձնացնում է հետևյալ ընդհանուր իմաստները՝

1. բացարձակություն, լիաժավալայնություն
2. հատկացականություն//հանգակետայնություն
3. մեկնակետայնություն
4. ուղեկցում (և՛ անջատում, և՛ հանգում)
5. ներկայություն (ոչ անջատում, ոչ հանգում)

Այստեղ էլ հիմքում դրված են երեք հատկանիշներ՝

- անսահմանափակություն
- անջատում

³ Р.Якобсон, К общему учению о падеже, в кн. "Избранные работы", М.1985, стр.133-174

- հանգում (հատկացում):⁴

Այս իմաստներից ուղղականին համապատասխանողը իր բնույթով բացարձակ է և մյուս բոլոր իմաստները վերացարկված կրում է իր մեջ:

Է.Աղայանն էլ, հաշվի առնելով ընդհանուր իմաստների՝ նաև գործառական հատկանիշները, տեղափոխվում է շարահյուսական մակարդակ և ներկայացնում հետևյալ հակադիր հարաբերություններ՝

1. առարկայական-հատկանշային
2. մասնակցություն-ոչ մասնակցություն
3. ուղղակի-անուղղակի մասնակցություն
4. ուղղվածություն-ոչ ուղղվածություն
5. հանգման-եղման ուղղվածություն
6. սահմանափակում-ոչ սահմանափակում⁵

Այսպիսով, մենք էլ հայերենում ընդունում ենք հինգ հոլով և ստորև ներկայացնում այդ հինգ ձևերի՝ մեր կողմից նկատված ընդհանուր իմաստները:

1. ՈՒՂՂԱԿԱՆ - անվանողական//բացարձակ
2. ՏՐԱԿԱՆ - հանգակետային
3. ԲԱՑԱՌԱԿԱՆ - անջատման, մեկնակետային
4. ԳՈՐԾԻԱԿԱՆ - գործողության միջոցի, «իրացման» (Աղայանի տերմինը)
5. ՆԵՐԳՈՅԱԿԱՆ – ընդգրկման

Այստեղ մենք, իհարկե, հաշվի ենք առել վերոհիշյալ գիտնականների մեկնաբանությունները:

Այսպիսով, ինչպես նկատեցինք, հոլովի քերականական կարգի շուրջ առկա հակասությունները շատ հաճախ հետևանք են ձևի և բովանդակության միասնության սկզբունքի անհետևողական կիրառման: Կարծում ենք, որ անհրաժեշտ է այս հարցում հստակեցնել սկզբունքներն ու հասկացությունները, զնալ ոչ թե մասնավոր, այլ՝ ընդհանուր լեզվաբանական ճանապարհով: Եվ հենց այստեղ է, որ կարևորվում է ընդհանուր հալովական իմաստների առանձնացման հարցը:

⁴ Գ.Բ.Ջահուկյան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, դասախոսություն, 1967թ., էջ 70-77

⁵ Է.Ա.Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե.1967թ., էջ 231